

ԲԱԺԱՆՈՐԴ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Քուղկարիոյ համար	
Տարեկան	10 Յր.
Վեցամսեայ	5 »
Սրտասահմանի համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Ամերիկայի համար	
Տարեկան	2.50 Տր.
Վեցամսեայ	1.25 »

ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԷԼԻ

Ծանուցանել տղր առաջին երեսին համար 40 սանթիմ կ. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ կ. երեքին անգամ անգամ համար 20 Օլո զեղը կըլլայ:

# ՇԱՆՏՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔԵՍԱԹԻ ԵՒ ՇԱՐՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նախկին և նորա զրկեղ  
Խմբագրութեանն հասցին

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjourn»  
Varna (Bulgarie)

Գրութիւնք ևս չեն տրուիր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐՈՒՆ

Վերջին անգամ կը դիմենք մեր այն գործակատարներուն որոնք տարիով և ամիսներով իրենց քով պահած են թերթիս գանձուած գրամները, և շարունակ մեզմէ ժամանակ կը խնդրեն ու կը խարեն: Եթէ այս անգամ ալ լուռ մնան՝ մենք ստիպուած պիտի ըլլանք ուրիշ միջոցներու դիմել:

Նոյնպէս և կր խնդրենք մեր այն բաժանորդներէն որք մինչեւ ցարք չեն վճարած իրենց բաժնեկիները հաճին անյայտ մեղ լրկել: Որովհետեւ Բ. տարին լրանալուն 2 1/2 տմիս մնաց:

ՄԻԹԷ ԱՅԴՔԱՆ  
ՄԵՂԱԴՐԵԼԻ ԵՆ

Մշոյ առաջնորդի կոչից յետոյ ամեն կողմից սկսեցին թղթակցութիւններ անդալ Մշեցի պանդուխտների մասին. այդ թղթակցութիւնները գրեթէ բոլորն էլ քննադատում և մտրակում էին Մշեցի պանդուխտներին, միայն Վահէ էր, որ աւելի մեղմօրէն վերաբերվեց պէպի Մշեցիները և Մշեցու դէպի իր երկիրը ու լքված ընտանիքը ունեցած անտարբերութեան պատճառը աւելի ուրիշ խաւերում փնտռեց:

Մենք մի քանի անգամ խնդրել ենք մեր թղթակիցներէրց որ աւելի հետաքրքրվեն հայ պանդուխտների կեանքով, աւելի նրանց վիճակի մասին գրեն, թողնեն մի կողմ զանազան անուղղելի թաղականներին, հոգաբարձուներին և տէրտէրներին, ու զբաղվեն բուն ժողովրդով. և այդ խնդիրը կատարեցին միայն մի քանի թղթակիցներ. իսկ այսօր, Մշեցիները կանանց և երկտանների հրապարակային բողոքից յետոյ, երբ կրօնականն էլ այդ բողոքը արդարացի գտաւ և նրան բաւաբաւականութիւն չը տալը հայրենիքի դաւաճանութիւն, քիսս համարեց՝ ամենքն էլ սկսեցին

գրել Մշեցիները մասին և միմիայն Մշեցուն մեղադրել:

Բայց մի՞թէ իսկապէս Մշեցին այդքան մեղաւոր է: Ինչն է ստիպել այդ հողագործ, երկրի հետամենասեղա կապերով կապված հային գաղթել. հայ վաշխառուն, քրտա աղան, և թիւրք պաշտօնեան: Նա գաղթել է աշխատելու, ընտանիքին հաց հասցընելու, վաշխառուից և թուրքից օձիքը աղաւելու պարտքը և հարկը վճարելու նպատակով: Սրանք այնպիսի հին ճշմարտութիւններ են որ կրկնելն անգամ աւելորդ էր:

Պարզ, միամիտ, չըտես, աշխարհի լաւն ու վատը, բարոյականն ու անբարոյականը չը որոշող հայ գիւղացին ընկել է ազատ երկիրների ծովափնեայ և միւս վաճառաշահ քաղաքները. այն անգործ ուր ազատ օրէնքների հետ թաղաւորում է և ազատ անբարոյականութիւնը իր բոլոր արտաքին հրապուրանքներով, որոնց, բարոյապէս ու մտաւորապէս կազմակերպված համարվող հայ նկարագիրներն անգամ գիմանալ չեն կարողանում և ընկնում են անբարոյականութեան ցիխի մէջ, ինչպէս կարող էր գիմանալ միամիտ, սոգէտ, անօգնական և անպաշտպան գիւղացի հայ պանդուխտը:

Ո՞ր բարոյական ու լուսամտ հայ երիտասարդը բարեհաճեց մտնել այդ հայ պանդուխտների մէջ. հետաքրքրվեց նրա ներքին աշխարհով, յորդորեց խրատեց նրան, լուսուորեց նրա միտքը:

Ո՞ր հայ հիմնարկութիւնը գուրդուրաց հայ պանդուխտի վրա, մտածեց հոգ տանել նրա բարոյական նկարագիրը անաղտոտ պահելու գործին. ո՞ր կրօնաւորը, որին դեռ հայ պանդուխտը յարգում է, դնաց նրա ճաշարանը, նրա խրճիթը խեղճի հետ խօսելու հայրենիքի և ընտանիքի մասին:

Մեղաւոր է միայն նրանով որ միամիտ է, սոգէտ է, հառակաւոր մանուկ է. բայց աւելի մեղաւորը նրանք են, որոնք կարող էին հայ պանդուխտներին օգնական, պաշտպան, առաջնորդ և բարեկամ լինել, ու չեն զան:

Մեղաւորը հայ լուսամտ երիտասարդն է. մեղաւորը արտասահմանի հայ մամուլն է. մեղաւորը արտասահմանի զարգացած համարված հայերն ենք: Եւ որչափ մենք անտարբեր լինենք դէպի հայ գիւղացի պանդուխտը. նոյն չափով մեր այդ տարրը պէտք է անբարոյականանայ, ու արագաբար կորչի:

Նախ պախտաբանք մեղ—լուսամտ հայրենաւէրներիս սպա հայ գիւղացի պանդուխտներին:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 29/17 նոյն.

Ինչ է Օրմանեանի նոր յանցանքը, պիտի հարցնէ ընթերցողը: Համբերէ քիչ մը. նախ ուրախալի լուր մը հարկուած: Հոկտեմբերի վերջերը Օրմանեան օր մը արտօրանօք Բ. Գուր կանչուեցաւ: Անոր Պայաղիտէն հեռագիր մը հաղորդուեցաւ. խումբ մը «չափկներ» Խլաթոյի յայտնի «աւաղակ» Սերոբի առաջնորդութեամբ, ուսական «մօտիներով» զինուած՝ մտած են Ալաշկիրտ, ու թը ժամ հրացանաձգութիւն են ունեցած ձափէր ազաի համիտիական քիւրտերուն հետ: Թօփուրազ-Գալէէն զօրք և ժանտարմաներ եկեր են, զանոնք ցիրոցան ըրեր են:

Իսկոյն Օրմանեան հեռագիր մը կը զարնէ առաջնորդներուն որ իրենց հօտը յորդորեն այդ «սրիկաները հալածելու»:

Աս ալ յանցանք մըն է, բայց մեր ըսելիքը դեռ վերջին կը պահենք:

Հաղիւ անցած էր 5—6 օր, երբ մանրամասն լուրեր տեղացին: Հասկցուեցաւ որ արհամարելի խումբ մը չէ և ոչ ալ «չափկներ»:

այլ 100էն աւելի յեղափոխականներ քաջ ապստամբ Սերոբի հրամանատարութեան տակ, անցեր են սահմանը գաղտնի մնալու և առաջուց նշանակուած տեղը ծածուկ, գիշերանց անցնելու համար: Պատահաբար քանի մը քիւրտեր կը նշմարեն և հաւար կը տանին ձափէր ազալի Օպան. ձափէր 200է աւելի քիւրտերով վրայ կը հասնի: Աւթը ժամ ճակատամարտ անդի կուենայ: ձափէր, իր եղբայրը և 40ի չափ քիւրտեր կիլնան: Յեղափոխականները և ոչ մէկ զոհ կուտան: Ոչնութեան կը հասնի Թօփուրազ-Գալէէն Իսահակ պէյը, 20 հեծեալ ժանտարմաներով, 40 կանոնաւոր զօրքով և 200—300 քիւրտերով: Սերոբի կարգադրութեամբ իր խումբէն 60 հոգի աւելորդ զէնքերն առած՝ կանցնին կերթան, իսկ ինքը, մինչեւ ընկերներուն հետքը կորսուիլը թշնամին կը զբաղեցնէ:

Իսահակ պէյ, 33 զինուոր, ժանտարմա մը և խել մըն ալ քիւրտեր նորէն կը սպաննուին: Յեղափոխականները 5—15 հոգի զոհ կուտան ու ապա գիշերը վրայ հասնելուն պէս կը պատուեն թըշնամի շարքերը՝ կանյայտանան: Կըսուի թէ վերջը Սերոբը մատնուեր և զլիսատուեր է:

Թէ հոս և թէ արտասահմանեան թերթերը մեծ ուշադրութիւն կը դարձնեն այն երեսօթիւն վրայ, որ ամէնքն ալ զինուած են եղեր «ոտսական» հրացաններով և սահմանէն անարգել անցեր են:

Հոս այդ մասին բաւական անհանդիստ են:

Օրմանեան ու Արթին խիստ սրտացաւ ու սրտակից ըլլալով Սուլթանի նոր ազտոտ խորհուրդ մը կը խորհին:

Երեք շորս օր առաջ Արթինի տունը ժողով կար, խառն ժողովի կողմէն բարեխնամ կառավարութեան «չնորհակալեաց ուղերձ» մը ներկայացնելու համար:

Ասկէ աւելի ստորնութիւն, ասկէ աւելի լիբը դատաճանու

Թիւն ալ անկարելի է : Կառավարութիւնը քանի ճնշումը կը շատցնէ, քանի ան դժոխային հաւածանքները կը սաստկացնէ՝ մեր ազգին պաշտօնական ներկայացուցիչները անշափ աւելի քան թիւնքով մը իրենց սողունական ստորնութիւնը կը բազմապատկեն :

Եթէ Լահէի ժողովին քաջած հեռագիրը ապտակ մըն էր լոկ արտասահմանեան հայութեան երեսին, ա՛յ ուղերձը ապտակ մըն է նախ ամէն յեղափոխականներու և ապա ամէն մէկ հայ զգացում ունեցող անհատի երեսին :

«Շնորհակալեաց և փառաբանութեան» ուղերձ՝ երբ յարաբերութեան ամէն ճամբայ կտրած է ողորմած Սուլթանը . . .

Ուղերձ՝ ճիշդ այն ժամուն, երբ նաւահանգիստներու մէջ հազարաւոր հայ ճամբորդներ սովամահի դուռն են հասեր :

Ուղերձ՝ երբ Պոլսէն սկսեալ մինչև յետին դաւառական անկիւնը խտութիւնն ու տանջանքը տասնապատիկ ու ժով զեռնին կը սեղմէ՝ ամբողջ հայութիւնը . . .

Վերջապէս շնորհակալեաց ուղերձ՝ երբ խումբ մը յանդուգն անձնազոհներ՝ արիւննին աչքերունին առած՝ բազմատանջ հայութեան սաղայէլ-դահլիճին դէմ հերոսութեան նոր փորձ մը կը ցուցնեն :

Ո՛չ, ա՛ս ուղերձն արդէն յեցուց հայու դառնութեան բաժակը . . . Ո՛չ, ա՛լ հանդուրժելու հնար չըլկայ . պատիժ է պէտք . պատիժ . . .

Ը Ն Դ Դ Ի Մ Ա Ռ Օ Ս Ա Կ Ա Ն

ՔԱՆԻ ՍԸ ԽՕՍԲ  
Պ. Ա. ՉՕՊԱՆԵԱՆԻՆ

«Անահիտ»-ի վերջին թիւը կը պարունակէ յօդուած մը՝ «Անահիտի դերը» վերնագրով, որու մէջ Արշակ Չօպանեան կը պարզէ իր հանդէսին տարուան մը շրջանին մէջ կատարած դերը՝ եւ այս առթիւ կը պատասխանէ նաեւ՝ ազգային յեղափոխական գործունէութեան մասին իր հրատարակած յօդուածներուն՝ դէմ եղած քննադատութիւններուն : Չարմաշալի է, որ Չօպանեան լոկ եռանդով վրայ հիմնուած գործունէութեան սաստիկ քննադատներէն ըլլալով հանդերձ՝ յայտնաբերելով իր հակառակական ծառայ մը առ իր հանդէսի ծրագրին, զոր ոչ թէ ինքը իր աշխատակիցներով, այլ նոյնիսկ մեր ազգային զարգացումին բոլոր կեդրոնները հուաքարալ չեն կրցած պէտք եղածին պէս գործադրել : Բայց մեր նպատակէն դուրս ըլլալով այս կէտին վրայ ծանրանալ, կուզենք միայն քանի մը խօսքով պատասխանել յեղափոխական գործունէութեան մասին իր յայտնած կարծիքներուն :

Այս տեսակէտէն՝ քննելով պարտինք խօստովանելու որ իր այս յօդուածը նախորդներու հետ համեմա-

Եթէ խառն ժողովն ալ ընդունեց, ստորագրեց ու ներկայացուց այդ ուղերձը . . . ո՛վ խայտառակութիւն, համարել այն ձեռքը, որ քու եղբայրդ խողտոցեց . . . լլիւլ այն ոտքը, որ արենակցիդ գուլթը ճղմեց . . .

Ո՛վ կրնայ չստորագրել . . . «տէօվլէթէ խային» բառերը կան հոս . չստորագրողն ալ դաւաճուն կը նկատուի :

Անդամ մը եթէ Օրման-Արթինի պիլզմ հոգիներու ծնունդ այդ ուղերձը ժողովին ներկայացաւ՝ հայու խայտառակութեան բաժակը լեցուն կըլլայ :

Այ համբերել չըլլար . թքնելու է զէզլէկ ստիստութիւններու վրայ . պատիժ է պէտք :

ՏԻՒՊԻՒԿԷՆ (Փերմանիա), 9 նոյն. Ինչ անուն տամ չեմ դիտարկ կը մտածեմ ու կը մտածեմ . . . հա՛, միտքս ինկաւ, կատակերգակներ : «Չայն Հայրենեաց» եթէ երբէք պատիւ ունիմ այս անունը բերանս առնելու, և իր աշխատակիցները նոր չէ որ սկսած են ժողովուրդին մէջ կատակերգական գերխաղալ : Նամանակաւոր լինելու չափը անցուցուցին, ա՛լ չը քաջուիր . նայեցան որ հայ ժողովուրդը դիտակից իր ներկայ վիճակին չուզեր այլեւս խաբուիլ ու իրենց պէս կոյր առաջնորդներէ կուրօրէն ստաշնորդուիլ, յուսահատուած իրենց այս դրութենէն, փոխանակ թէ՛ իրենց և թէ՛ իրենց օրգանի ուղղութիւնը փոխելու :

ախրով աւելի միտարական սպաւորութիւն մը թողուց մեր վրայ : Որովհետեւ հակառակ այն արձամարհանքին, զոր իր քննադատներուն դէմ կը ձեռնարկէ, կարծ միջոցի մը մէջ բաւական բան փոխած է իր հին պատգամներէն, որոնք մինչև նոր սպաղարութիւն ազատութեամբ զեռ շատ փոփոխութիւն պիտի կրեն :

Նախ սրածիւր ըզրք մը կուղղանոնց դէմ, որոնք զինքը՝ ներկայացուցած են «բեր պահպանողական, հակափոփոխական, հակառակորդ հայկական գործունէութեան» եւն. : Անա՛ կէտ մը, որ բացարձակապէս անկորելի է կը դարձնէ իրեն հետ լուրջ վիճարարութիւն մը՝ անմիջապէս երբ իրեն մէկ կարծիքը ջախջախելու «եւ ասանկ չեմ կրնամ» կարծ ճամբուն կը պիտի : Եւ կարծես այս կանխահոգութեամբ իր յօդուածներուն կարեւոր կէտերը միշտ երկդիմի կերպով մը կը ձեռք ու յստախ միեւնոյն յօդուածին մէջ իսկ իրարու արամագործէն հակառակ պարբերութիւններով փոխուած զուտ մը կը պատրաստէ : Ստուգելու համար թէ՛ օրջափ ճշմարիտ է իր այս հերքումը՝ բաւական է աչքէ անցնել «Նոր Կեանք»-ի և «Ս. Նահիա»-ի մէջ հրատարակուած նախորդ յօդուածները : Բայց որպէս զի աւելորդ նեղութիւններ չպատճառենք ընթերցողին, հոս ի մէջ կը բերենք հատուած մը միայն «Իմ հայրենասիրութիւնս» յօդուածէն, որ իր հայրենասիրական վարդապետութեան հանգանակն է :

«Փոխանակ անմաստ ու ինքեւ յանդիմանութիւններով հայրենիքին մէջ ցեղին ապառքութիւնը հեռուէն աէ աւելի վառնալու, փոխանակ ինքեւն ազգը օրէ օր աւելի սկաւրացնելու, հայ ազգը թո՛ղ պատրաստուին բարոյական նեցուկներ ըլլալ կիսամեծ ազգին, անոր հողին կենդանի պահել, անոր վարկը բարձրացնել, անոր գոյութիւնը ամբողջել : Դպրոցը, վաճառականութիւնը, արհեստները, գիտութիւնը, գեղարուեստները, գրականութիւնը . . . ահա՛ անգին դարմանները, որոնցմով մեր ցեղը պիտի վերականգնուի : Օսմանեան կայսրութեան ամենէն զարգացած, ամենէն հզօր ցեղը ըլլալ ջանանք : Ասոր համար բոնութիւնը մեզի շատ սկար արգելք մըն է . այդ դաշտին մէջ առհէն աւելի մեր թշնամին՝ Յոյնը, հրէան ու եւրոպացին են, որոնք մեր գիրքը ձեռքերուս առնելու կը ստանան . քո՛ւն արգելք մեր իմաստակութիւնն ու ծուլութիւնն է : (Եւ քիչ մը վարք) Չենք կրնար յաւակնիլ կարծելու թէ մենք հայերս այնքան նիւթական ոյժ ունինք, որ մեծ յեղաշրջում մը ժամանակ, հակառակ Ռուսիոյ, Ֆրանսիոյ և Եւրոպայի կոտորածներէն անկենքեւ ընդդիմութեանը և հակառակ սեղանական, աշխարհագրական և պատմական զարհուրելի յոգուարութեանց, կարենանք մինակնիս քաղաքական յաջողութիւն մը ձեռք բերել : Ուրիշ բան չունինք ընելու, բայց եթէ զէպերուն սպասել :»

(Նոր Կեանքի թիւ 8)

վերջինիս անունը փոխեցին, պարզապէս ժողովուրդին աչքը շլացնելու համար : Եւ այսպէսով ընկղմեցան այն անբարոյականութեան ճահճին մէջ, ուր իրենց նմանները միայն կը գրտնուին : Սիրելի ընթերցող ի՞նչ կը սպասես, այսպիսի անբարոյականներէ, որոնց միտքն ու հոգին կուրացած, բղայած, զըրպարտութիւն, ստախօտութիւն ու խաբելալութեան բոլոր միջոցները, ժողովուրդին միտքը շփոթելու համար նպատակակէտ ընտրած են : Խաւարի առաքելներ : Արդ ի՞նչը, հարցնե՞լ թե՛ բեւ, իրենց հետեւողներ . . . միայն իրենք են, ու զրացին թէ . . . թօփ նետեցին . . . Իրենցմէ զատ ուրիշ չխաբուիր : Ի՞նչ կը մտածեն այդ պարտնէրը . անանկ ալ՝ Ուրեմն, մեղ համար ուրիշ բան չի կայ, «էտէպիտիզութեան» ելլալու է . . .

Յեղափոխութեան դրօշը բարձր բռնող երիտասարդները, հայրենիքի ազատութեան համար իրենց արիւնը, անգին արիւնը թափուլ եկիտասարդներուն ուրուականները, յաւէ՛տ անէ՛ծք պիտի կարգան ձեր գիրտուն, Յեղափոխութեան հովիտի առնէք, բաւական է որ խոշնդոս չըլլաք :

«Չայն Հայրենեաց»-ի 21 հոկտ.

«Փոխանակ անմաստ ու ինքեւ յանդիմանութիւններով հայրենիքին մէջ ցեղին ապառքութիւնը հեռուէն աէ աւելի վառնալու, փոխանակ ինքեւն ազգը օրէ օր աւելի սկաւրացնելու, հայ ազգը թո՛ղ պատրաստուին բարոյական նեցուկներ ըլլալ կիսամեծ ազգին, անոր հողին կենդանի պահել, անոր վարկը բարձրացնել, անոր գոյութիւնը ամբողջել : Դպրոցը, վաճառականութիւնը, արհեստները, գիտութիւնը, գեղարուեստները, գրականութիւնը . . . ահա՛ անգին դարմանները, որոնցմով մեր ցեղը պիտի վերականգնուի : Օսմանեան կայսրութեան ամենէն զարգացած, ամենէն հզօր ցեղը ըլլալ ջանանք : Ասոր համար բոնութիւնը մեզի շատ սկար արգելք մըն է . այդ դաշտին մէջ առհէն աւելի մեր թշնամին՝ Յոյնը, հրէան ու եւրոպացին են, որոնք մեր գիրքը ձեռքերուս առնելու կը ստանան . քո՛ւն արգելք մեր իմաստակութիւնն ու ծուլութիւնն է : (Եւ քիչ մը վարք) Չենք կրնար յաւակնիլ կարծելու թէ մենք հայերս այնքան նիւթական ոյժ ունինք, որ մեծ յեղաշրջում մը ժամանակ, հակառակ Ռուսիոյ, Ֆրանսիոյ և Եւրոպայի կոտորածներէն անկենքեւ ընդդիմութեանը և հակառակ սեղանական, աշխարհագրական և պատմական զարհուրելի յոգուարութեանց, կարենանք մինակնիս քաղաքական յաջողութիւն մը ձեռք բերել : Ուրիշ բան չունինք ընելու, բայց եթէ զէպերուն սպասել :»

(Նոր Կեանքի թիւ 8)

թուոյն մէջ Թիւրքիէն արարածին մէկը, կորիւն ծածկանուան տակ, համարձակած է իր մէկ նամակով Ամերիկայի պէս ազատ երկրի մը մէջ ճշմարտութիւնը ոտնակոխ ընել և ստախօտութեան — և ո՞ր ստախօտ — շատագով հանդիսանալ. չեմ սիրեր իր այդ սուտերով շինծու նամակը կրկնելով՝ ընթերցողին ձանձրոյթ պատճառել : Միայն թէ՛ իր ըսածին նայելով «Շարժումը զրպարտիչ, հայհայիչ թերթ մըն է . . . Լաւ է դտեր իր անձին յարմար անականները, բայց ոչ «Շարժում»-ի նման թերթին վայել : Որովհետեւ «Շարժում»-ը իր գործին չի դար, պէտք է սնուցուածու զրպարտել : Պ. կորիւնը յեղափոխութիւն . . . աղմուկութիւն . . . ու թիւն ևն. ևն. բաւեր ալ գործածած է իր նամակին մէջ, ուրկէ ալ դատար առնէք : Եթէ անաչառ ես, իսկական անունովդ ստպարէզ ելիր, մանաւանդ իմ . . . թիւն, ճշմարտան ըսեմ, այդ բոլորը նախանձի արգիւնք է . . . Թէեւ «Շարժում» ձեր նմաններէն գովուելու պէտք չունի : Դուք կուզէք ազգին անունովը գործել, բայց չէք ուզեր որ ձեզ քննադատեն . կուզէք յեղափոխական անունը կրել, բայց չէք ուզեր որ ձեր շահատակութիւնները պախարակեն և ձեզ նման ժողովուրդին բարոյապէս փրատկար անձինք ծանօթացուին : Դուք չէք հաւնիր «Շարժում»-ին, — ձեր համակրանքին և ոչ մէկ առեւն պէտք կայ — ո-


Անա՛ հատուած մը կէտ առ կէտ ընդօրինակուած, որու իմաստը կարծենք շատ պարզ է : Այսինքն՝ փոխանակ յեղափոխական շարժումներով հայրենիքը աւելի փոփոխելու, մեր երիտասարդութիւնը պէտք է աշխատի կրթութիւնը, վաճառականութիւնը, արհեստը, գիտութիւնը, գրականութիւնը և իրարմի ամենայնի գեղարուեստը ծաղկեցնել հոն. ո՛ր — Հայաստանի արիւնտա քաջախրուն մէջ, որովհետեւ մեր բուն թշնամին ոչ թէ թիւրքը կամ քիւրտը են, այլ յոյնը, հրէան, եւրոպացին, որոնք մեր գիրքը ձեռքերունուս կառնեն. և եթէ այս ճամբուն մէջ չենք կրցած պէտք եղածին պէս յառաջանալ՝ զիտաւոր արգելք մեր իմաստակութիւնն ու ծուլութիւնն է եղած . (ու հետեւաբար հայրենիք մը Սուլթանը մեր ծուլութեան համար պատժեց մեզ կոտորելով, գեղարուեստական պատիժ) : Հայաստանի ներկայ պայմաններուն մէջ խմբարկութիւն է քաղաքական յաջողութիւնը յուսալ, ուստի ուրիշ բան չունինք ընելու, բայց եթէ՛ Աստուծոյ ողորմութեան սպասելով՝ Օսմանեան կայսրութեան ամենէն զարգացած, ամենէն հզօր ցեղը ըլլալու ջանալ (մեր թէ կոտորածներուն բուն պատճառը մեր այս ջանքերը՝ եղած չըլլային) :

Անա՛ զեռ տարի մը առաջ այս տղազերը գրողն է՝ որ այսօր իր զըրպարտիչներու կը զարբանայ իր ընթերցողին ճիշդ անունը ստորագրելով. ու շատ հաւանական է, որ զիս

բովհետեւ «ճարժում»ը նոր գազափարնեբու տարածման և մուլտիպլիկացիոն, նախապաշարումներու և բոլոր վնասակար յատկութիւններու, որոնցմով մեր ժողովուրդը բեռնաւորուած է և որոնք մեր ժողովուրդը դէպի խաւար կառավարող են, օրդան է: Իսկ դուք կը փախիք այս ամենէն: «ճարժում»ը միայն իր կոչումին կը հետեւի: Մենք հաւանած ենք և պիտի հանինք «ճարժում»ի ուղղութեան: Իսկ հեռի՝ ձեզ նմաններէն, վայրկեան մը առաջ ասպարէզէն քաշուեցէք: Հաստատ գիտցէք որ ուր լոյս կայ, խաւարը իսպառ կը հեռանայ անկէ:

Աղուէսի պէս խորամանկ է, Պ. կորիւնը: Նամակին վերջը յորդոր կը կարգայ Ամերիկայի հայոց որ զգուշանան սոյն թերթը «ճարժում»ը կարգալէ, թունաւոր է: Սուտ չես, «քեզի պէս ստախոսներուն համար» ճշմարտութիւնը թոյն է... Իբրեւ թէ Ամերիկայի մէջ ներքին կռիւներ դոյութիւն չունին (°) եղբր—կը բաղձայինք—հա՛, հա՛, հա՛, իսկ «ճարժում»ը ատոր պատճառ կը լայ... ու անոնց պատիւը կարատուորէ... Զարմանալին այն է որ դեռ պատիւ ունենալ կը կարծեն: Մենք ձեզ՝ ձեզմէ աւելի լաւ կը ճանչնանք: Վա՛յ ձեզ կատակերգակներ...:

ԽՈՒՆԻ-ԿՈՉՄՈՍ



ալ խեղաթիւրիչ մը հոշակէ՛ հակառակ վերոյշինջեալ հատուածին բացայայտ իմաստին՝ թէ ինք միայն «անիմաստ» թեթեւ յանդգնութիւններու» դէմ եղած է եւ ոչ թէ յեղափոխական գործունէութեան:

Իր գէժ գրուած գանազան քննադատութիւնները ակնարկելով՝ Չօպանեան կածելցնէ Վե արդէն, հակառակապէս ամբողջ բովանդակութեամբ ի վատաբանող խօսքին, զոր այս կարգի ուղղակի յարուցին «Անահիտ»ին դէմ, եւ որոշ ու հաստատ ապացոյցը ունեցայ թէ ճշմարտ ճայրենասէրները՝ բուն անձնուէրները, իրական գործիչները, ինքն իսկ հայ ժողովուրդը բմբռնած էր ինչ որ «Անահիտ»ը կը քարոզէր, կը բաղձար, կը զգացնէր:

Աղբատ օրտի միւլթարա՛նք մենք պեսանք քիչ առաջ, որ գորդը ինքն ալ բան մը չէ բմբռնած իր քարոզներէն ու բաղձանքներէն, որոնք խենդի քարոզին ու բաղձանքին պէս փոփոխական են: Այդ մարդերու լուծութեանը, զոր ինքը, իբր համախոհութեան նշան կը նշուի, յառաջ կուգայ սեռակ մը զգացումէ, որ արժանապատուութիւն կը կոչուի: Իր յօդուածներուն և մանաւանդ անոնց գլուխ գործոց «Պատասխանատուութիւնները» հրաշակերտին հրատարակութեան առթիւ պատեհութիւնը ունեցած ենք շատ մօտէն շօշափելու անոնց կարծիքը: Բոլորն ալ առանց բացառութեան՝ արձամարձակք լուծութեան մը միայն վախել կը գտնէին այդ «կոչիկէն վեր»

ՎԱՌՆԱՅԻ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԴԸ

Շուրջ երկու տարիներէ ի վեր տեղւոյս ազգային գործերուն անկերպարան վիճակը քանիցս լրագրաց մէջ ծեծուած և ոչինչ արդիւնք մշտեղ ելած էր. այս ցաւալի կէտը հրապարակագիրներէն ու մասնաւոր քանի մը անձերէ զատ ոչ ոք նկատի առած էր. թէեւ վերջ մը սալու համար այս վիճակին, Տէր Մարտիրոս հայրը ասկէ երկու ամիս առաջ հրատարած էր ամէն պարտաճանաչ ազգայինները. բայց այդ ընդհանուր ժողովը ինչ ինչ պատճառներով տեղի ունեցած չէր, այսօր գոհութեամբ սրտի կուզանք յայտարարել թէ կիրակի օրուան կատարուած ընտրութեան մէջ 329 ընտրող ազգայիններու մէջէն 149 քուէներով ընտրուեցան հետեւեալ անձերը քուէից բացարձակ առաւելութեամբ.

Table with 2 columns: Name and Votes. Includes Տիարք, Սարգիս Ուղունպօղոսեան 114, Արէլ Արէլեան 111, Յովսէփ Պարսամեան 110, Յովակիմ Մ. Թովմասեան 101, Գրիգոր Կիւլպէտեան 85, Կարապետ Սանապճեան 69, Սարգիս Գաբրիէլեան 68.

Յիշեալ ընտրողական ժողովը ամենայն կանոնաօրոթեամբ կատարուեցաւ. Տէր Մարտիրոս հայրը հսկեց քուէներուն վրայ. բայց ցաւալի էր տեսնել միայն որ իր հրատարակած հրաւերի համաձայն հազիւ թէ տասը հոգի

գաղթականներէն բարեհաճած էին երթալ իրենց անոնները արձանագրել տալ ընտրելի լիւնելու համար:

Մենք ոչինչ գիտողութիւն ունինք յիշեալ ժողովին նկատմամբ:

Մենք իբրեւ նախանձախնդիր ազգ. գործերու բարոզման յաջողութիւն կը մայլոնք յիշեալ նորընտիր թաղական խորհրդին և կը յուսանք թէ մեր պարտաճանաչ հայ ազգայիններն ևս մեզի համամիտ լինին. հակառակ պարագայի տակ մենք չենք կրնար այս ինչ կամ այն ինչ թաղական խորհուրդը պատասխանատու բռնել, և թէ համոզուիք անոնց օրինաւոր գործունէութեանը վրայ:

ՄՈՒՐԱՏ-ՍՈՎՐԱՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆՔԼԻԱ ԵՒ ԹՐՍՍՎՈՒ

Անգլիան թէեւ զբաղուած թրանսվալի պատերազմով, ուշի ուշով կը դիտէ քաղաքական աշխարհը հասկնալու համար թէ իրեն դէմ ինչ գաւազրութիւններ կը կազմուին: Սամօայի խնդրոյն մէջ Գերմանիոյ եռանդուն կայսեր պահանջներուն շիջանելով Գերմանիան չեղբացուց. պատերազմի սկսուած տեսնելը քանի մը եւրոպական թերթեր իրենց պետութիւնները զրգոցելն միտահամուռ ուժով

Անգլիոյ դիմագրել, անոր աշխարհակալական ձգտումներու առջեւ պատե՛չ մը դնել, բայց այդ ամէնը զուր անցաւ, որովհետեւ ցամաքային զօրեղ պետութիւններէն մին Գերմանիան որոշած է չեղօք մնալ, անոր կայսրը այսօր Անգլիոյ թագուհոյն հիւրն է, չը նայած որ Գերմանական մամուլին մէկ մասը կայսեր այդ այցելութեանը դէմ էր:

Անգլիա այսօր տեղի համուզուած որ, եւրոպական մեծ պետութիւնները չը պիտի կրնան իրեն խանգարել, աւելի մեծ պատրաստութիւններ կը սեսնայ հարաւային Արիւիկէն տիրապետելու: Պատերազմը թրանսվալի մէջ կը շարունակուի, թէեւ անգլիական քանի մը քաղաքներ Պօէրներէն պաշարուած են, բայց Անգլիա պարտուած չէ, և հարիւրին իննուսուն չը պիտի պարտուի, որովհետեւ Պօէրները քանի որ մինչեւ հիմա, երբ անգլիական զօրքը շատ քիչ էր թրանսվալի մէջ, չը կրցան վճռողական յաղթութիւն մը տանիլ, այսուհետեւ ալ աւելի դժուար է Պատերազմներուն յատկ զրկանքները և դժուարութիւնները անշուշտ ազգած պիտի ըլլան: Հարաւային Արիւիկէի պետութեանց ժողովուրդներուն վրայ և պակսեցուցած անոնց նախկին եռանդը: Արդէն Օրանսի մէջ զժողովեան նշաններ կերելին. ատոր վրայ կաւելնայ և այն որ անգլիական զօրքերը

այսօրուան գրողները մեկնելու պարզելու նիւթ կը գտնեն անոր մէջ, մինչդեռ մեր քննադատները քանի մը էջերու մէջ՝ գրչի մէկ հարուածով մը ամէն բան կորոչեն, պատասխանատուութիւններու վերջնական վճիռները կարծակեն: Մարդ այնչափ միայն զլուսնագիտութիւն ունենալու է, որչափ հովի մը մտածելու համար թէ նազարէկի յօդուածները, կամ այս ու այն մարդու ընթացքը պատճառ եղած են մեր դէմ Ռուսական քաղաքականութեան աննպատակ վերաբերումին և կամ թէ՛ ներս և Պարսիաքի սխալ քաղաքականութիւնը առիթ տուած Սան-Սթէֆանոյի 16 երորդ յօդուածի ջնջումին. գործ մը որու մէջ ոչ մէկ դեր կրնար խաղալ հայութիւնը, զայն ներկայացնողը ըլլար Արիւիկէն մը կամ նուպար փաշա մը իր «բանալի» ծրագրով՝ երբ երկու մեծ պետութիւններու՝ Ռուսիոյ և Անգլիայի շահերն էին, որ կը մրցէին և 16 յօդուածին 61 շրջուելով լոկ Պիքօնֆիլտի յաղթանակին արդիւնքն էր: Որովհետեւ Անգլիա բացէ ի բաց կը տեսնէր, որ Ռուսիոյ թեւարկութեամբ Հայաստան պիտի հասնէր այն վիճակին, ուր այսօր Եգիպտոս կը գտնուի. բան մը, որ սրչափ մեր, նոյնչափ ալ Անգլիայի կենսական շահերուն կըստ պատնար: Բայց մենք չենք ուզեր երկար կանգ առնել 16 և 61 թուախաղին վրայ, որու մասին արդէն Չերապ և ուրիշներ գրեցին՝ թէեւ Չօպանեան «Զոր ինչ գրեցի

գրեցի» ի ուղղութեամբ չուրբ բառ մը իսկ զեղչել իր այդ թիւր ենթադրութիւններէն: Միայն այսչափ կրնանք անցողակիլ, թէ եւրպական պետութիւններու քաղաքականութիւնը բացարձակապէս իրենց սեփական շահերուն վրայ հիմնուած ունի ուղղութիւն մը, զոր բացի այդ շահերէն չեն կրնար փոխել ոչ արտաքին անհասանելի ազդեցութիւնը եւ ոչ իսկ մեզի պէս ազդեցող գիտումը. ատոր ապացոյցները մեր դեռ երկուսու պատմութեան մէջ իսկ կրնանք գտնել: Հայկական խնդրին ծագումէն ի վեր ի թէ երբէք հայոց կողմէն պաշտօնապէս գիտում մը եղաւ ու եւ պետութեան, ան ալ Ռուսիան է. հայութեան գերագոյն ներկայացուցիչը, էջմիածնի կաթուղիկոսը՝ Սասնոյ կոտորածին ու յուզումներէն ետքը Ռուսաստանուն ընդհանուր փափաքին վրայ, ելաւ մինչեւ Պեդերսպուրկի գնաց և ներկայանալով Չարին, անոր հօր աջակցութիւնը խնդրեց յայտարարելով որ «հայերու միակ պաշտպանը Ռուսիոյ կայսրն է, որմէ միայն կրտսուէին հայերը իրենց փրկութիւնը»: Չարը խոստացաւ կարելի եղածը ընել ու մենք սեռանք որ այս խոստումը քիչ չեսոյ 95 ընդհանուր կոտորածներուն յանդեպ: Մինչդեռ ասկէ 18 տարիներ առաջ ներսէս Գառիբարձին նմանօրինակ մէկ գիտումը Սան Սթէֆանոյի զաշնադրութեան մէջ 16 երորդ յօդուածը մտցնել կուտար:

Այս երկու գիտումներուն արդիւնքին անաղին տարբերութեան պատ-

կը լեցուին իրանովալ, ու Պօէր- ները այսուհետեւ պիտի պատե- րազմին բազմաթիւ զօրքերու հետ: Հիմակ Պօէրները ամէն ճիգ կը թափեն իրենց պաշարած և անզլիական փոքրաթիւ զօր- քերով պաշտպանուած քաղաք- ները գրաւելու, չեն կրնար: Պօէրներու բոլոր կատարել յար- ձակումները առ այժմ պարագը անցած են. Լատովիթ, Էստ կուրթ, Տիւրքան, Կէպըրէյ և Մաֆէ-Քինկ քաղաքները որ եր- կար ժամանակէ ի վեր պաշա- րուած են, գեռ անձնատուր չե- զան:

Հիմակ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մեր Պօլսոյ թղթակիցէն կի- մանանք որ Օրման-Արթինի ըս- տիզմած շնորհակալաց քուէն ստորագրուեր է: Միտ համարին ամբողջ թղթակցութիւնը կը հրատարակենք:

— Պօլսեցի Սարգիս պէյ պե- տական ճարտարապետը մեռնե- լով 70000 ոսկի հարստութիւն է թողած Սոֆիկ և Սոլումիկ «հա- նըմներուն», և ոչ մէկ սանթիմ գոնէ հայ անօթի մանուկներուն, և այդ չոր գլուխ մարդը հայ մը եղած է. այս, հայ՝ բայց թրքա- ցած պէյ, ոչ կրօնքով, այլ հո- զով, սրտով, մարմնով և արիւ- նով:

— Մշոյ մէջ կարօտեալներու վիճակը խիստ արգահասելի է, տեղապահի մէկ քանի զիմու-

ներէն վերջը նպաստից յանձնա- ժողովը հազիւ կրցեր է 100 ոս- կի զրկելու սրտումը տալ:

— Կառուցել կարօտեալնե- րու սերմնացանի և ուտելիքի համար Պատրիարքարանը պիտի գիմէ կառավարութեան, ըստ ո- ռոշման խառն ժողովոյ, ցորեն խնդրելու:

— Վանայ կաթոլիկ կրօնաոր- ները Ալթամարայ կաթոլիկո- սութեան անխնամ մնացած թե- մերը ցրուեր են, և Հայոց Ձոր գաւառին մէջ սկսեր են նպաստ բաշխել և հոգևոր պաշտօններ վարել:

Աշնանացանը լաւ արգիւնք կը խոտանայ կըսեն, և այդ պատճառաւ ցորենի գինը դարձեր է բարձրանալ: Ներսէս եպիսկո- պոսը՝ շատ կը նեղուի կարօտեալ- ներուն գիմումներէն:

— Կովկասի մէջ ուսու կառա- վարութիւնը նորէն սկսեր է հա- յերը ձերբակալել և խուզարկու- թիւններ ընել:

— Վառնայի աղգային երկսեռ վարժանները փակուած են տա- րափոխիկ հիւանդութեան պատ- ճառաւ:

Վ Ր Ի Պ Ա Կ

176րդ թիւին մէջ ապագրա- կան սխալ մը տեղի ունեցած է «Եգիպտական քրօնիկոսի բաժնին մէջ» (երրորդ էջ, 13րդ տող) «մարտի թիւները» բառը պիտի ըլլայ «մարտի թիւները»:

—)(—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Եգիպտոսի անգլիական զօրքե- րէն քանի մը վաշտ ճամբայ ին- կած են զէպի Անգլիա:

— Ռուսիայէն «Մօրնէնկ-Փօսա» լրագրին կը հաղորդեն թէ՛ Աս- տրախանի մէջ ժանտախտ երեւ- ցեր է:

— Թիւրք կառավարութիւնը Երիտասարդ Թուրքերուն լաւ հակելու համար, Ձուրիցերիոյ Պեռն քաղաքի մէջ ալ հիւպատոս պա- հելու արտօնութիւնը ստացած է: Ձուրիցերական կառավարութիւնն ալ միտք սնի Պօլսոյ մէջ հիւ- պատոս պահելու:

— Ռուսիա Գարու լի մէջ հիւ- պատոս ունենալու համար բա- նակցեր է Անգլիոյ կառավարու- թեան հետ:

— Հեռագիրները կը հաղոր- դեն թէ Լատովիտ առնուած է, բայց այդ լուրը գեռ հաստատ չէ:

— Սուլթանը իրատէսով մը ար- տօներ է շինել Պաղատաի երկա- թովոյ գիծը:

— Շահայէ կը տեղեկացնեն թէ Չինան-Պուի մէջ հակաքրի- տոնէական լուրջ խռովութիւններ տեղի ունեցեր են:

— Կիրակի օրը Վառնայի մէջ միթիւնկ մը տեղի ունեցաւ յօ- զուա Մակիթնական դատին:

Պուլկար ամէն կուսակցութիւն- ներու ներկայացուցիչները ճա- ուեցին:

—)(—

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Քէօտտէնճէ, Յովէ. — Ստա- ցանք ձեր համակրանքով լի նա- մակը. շնորհակալ ենք, բայց տպագրել չենք կարող, որովհե- տեւ միայն մեզ կը վերաբերի: Վատերի հետ մենք միշտ պիտի կուենք:

— Պուրկազ, Գլտոզ. — Ձեր թղթակցութիւնն էլ նոյն խնդրի մասին է, չենք հրատարակեր, գրեթէ վերջը յիշած պատճառ- ներով: Թողէք վատերը իրանց գործը շարունակեն: Նրանց զէն- քը սուտն է և անբարոյական մի- ջոցները, որոնցով միշտ իրանց տունը կը քանդեն:

— Արարկիբի Մագ գիւղէն հայր և որդի Խաչատուր և Պետրոս Ձուռնաճեան որոնք սասը տա- րիէ ի վեր կորուսած են. կը խնդրուի ամէն անոցմէ որոնք տեղեկութիւն ունին անոնց վրայ հաճին խմբագրութեանս տեղե- կութիւն տալ:

— Վանայ կարճկանից Գոմս գիւ- ղացի Ղարապ Գրիգորեանին յանձնեցինք նամակը:

— Համարձու՛մ Համարձու՛մ եան Կէյվէյի սափրիչ, կը զրտ- նուի եղբեր Քէօտտէնճէ քահֆէ Թէօֆիլ Ստրատա Թահմիզ, թիւ 3:

Թ Մ Տ Ր Ո Ն «ԱՆԿՆԻ Լ ՍԼԻՎՈՅ»

«Վէսէլլո» հայ թատերական խումբը, վաղը գիշեր, Կոնստ. 25, պիտի ներկայացնէ «Սէրվէթ ի- չիւն ձիւնայէթ» արամ-գօմէտի 4 արար:

Ժիմնաստիք, արքայաթ և պա- լէթ 2 արար՝ Եանի Տրականօֆ և օրիորդ Քաթիւնայի կողմանէ:

Печать в «Взгляд» Варна.

ճառները ոչ երկու հոգեւորականնե- րուն անձնաւորութիւններն էին և ոչ ալ ուրիշ բան մը, այլ միմիայն Ռուսական շահերը:

Անգլիա իր շահերուն զրգուժով գրեթէ ինքնաբերաբար ստանձնեց մեր դատին պաշտպանութիւնը ար- տառովոր եռանդով մը, ու միայն այն ժամանակ ետ քաշուեցաւ՝ երբ անակնկալ զօտաբութիւններ ծա- գեցան՝ ու իր ակնկալած շահը հա- լանական մեծ վտանգները չէր հա- կակչուէր: Բայց այս պարագան պատ- ճառ մը չէ, որ մեր յոյսերը կարենք իրմէն, որովհետեւ եթէ կայ պետու- թիւն մը, որու շահերը համապա- տասխան են մեր շահերուն, ան ալ անտարակոյս Անգլիան է. ու ան օր մը սրտեհ ստիթը ներկայանալուն՝ զարձակ ինքնաբերաբար յառաջ պիտի մղէ մեր խնդիրը: Մինչդիռ եթէ Ռուսական պետութեան հազար տեսակ զիմուներ ալ ընենք և ու- ըրիչ ինչ զիւանագիտութիւն ալ բա- նեցնենք, ան երբէք անկեղծօրէն պիտի չուզէ մեր յաջողութիւնը, ո- րովհետեւ այդ իր շահերուն բացար- ձակապէս հակասակ է:

Յեղափոխական գործունէութեան մասին Չօպանեանի քննադատու- թիւններուն մէջ կան ճշմարիտ կէ- տեր, բայց անոնք նորութիւններ չեն եւ չնոյնիսկ քննադատող գոր- ծիչներուն անձնական փորձառու- թեան արգիւնք՝ եղող իրողութիւն- ներ են: Գործնք՝ այսօր իրենք ալ կը խոստովանին: Սակայն Չօպան- եան իր «ինչպէս տեղ մը յայտնած

եմ», «ինչպէս ուրիշ առիթով գրած եմ», «ինչպէս նախորդ յօդուածիս մէջ ցցուցած եմ ներովը՝ այնպիսի հովեր կառնէ իւր թէ նոր զիւտեր ըրած ըլլար, կը հասկնայ արդե՞ք թէ ինչ է 800 տարի է ի վեր քնած ժողովարդի մը զարթնումի ցունցը, երբ շարժումներ կանխահասու- թիւնը կը զատապարտէ: Մեզի հետ անչու ինքն ալ կընդունի թէ հա- յուն զործերը ինքը հայր թիւն պիտի կատարէր և ոչ թէ օտարներ և կամ երկիրէն իջած կատարեալ էակներ, իսկ մեր մէջ Գալուբի պէս մարդեր թէեւ քանակաւ ենք խել- քով՝ ու կարողութեամբ՝ բայց զլժ- բազդարար՝ ոչ նոյն սրտի աէր: Մեր պետական մեծ մարդերը, նուպար փաշայի նման ազերագոյն հայները բոլորովին օտարին ծախուած՝ այն ժամանակ միայն զիրենք ծնող ազ- գին գործերուն միջոցաւ կապա- մէտութիւն ցոյց առած են, երբ այդ ասպարէզին մէջ փառքի ակնկա- լութիւն մը ունեցած են: Եւ արդէն ըստ Չօպանեանի հրաշալի զատողու- թեան, անոնցմէ ազգային ծառայու- թիւն պահանջելու իրաւունք ալ չուենք. որովհետեւ «անոնք մեծ եղան, աւելի թանկագին ծառայու- թիւն չէին կրնար մատուցանել իրենց ազգին» (Իմ հայրենասիրու- թիւնս յօդ.): Ուրիշ վիթխարի գործը իր բոլոր ծանրութեամբ ին- կաւ երիտասարդութեան վրայ, որու մեծ մասը աւելի քան քանդակը քան փորձառութիւնն է: Այսու հանդերձ մեր կողմէն կանխահա՛մ բառին բուն

նշանակութեամբ շարժում մը ա- պրտամարտութիւն մը տեղի չունեցաւ, իւրոր գործիչներն ալ, սրբափ ալ անփութ ըլլալին՝ կանխապատրաս- տութեան մը անհրաժեշտութիւնը անտեսելու չափ կոյր չէին: Սակայն ճանկահայաստանին մօտէն ծանօթ եղողները միայն զիտեն թէ՛ որ աստիճան հնարաւոր էր հոն այն «նոր կազմակերպութիւնն ու կան- խապատրաստութիւնը» զոր այսօր Չօպանեան և իրեն պէս Վոստրիկ ափերէն անգլիւն չանցած պատգամա- խօսներ իրենի ծամոց ըրած են: Հայրենիքին մէջ իսկ հայերու ան- ջատ, ցրուած զիրքը, դաղտնի կազ- մակերպութեան մը համար ժողո- վուրդին գեռ խակութիւնը, մատ- նիչները, չէզոքները և մանաւանդ աստիճան բոլորին վրայ թիւրք կառա- վարութեան ձեռք բերած փորձառու- թիւնը՝ մեզի վիճակակից ազգերու ապստամբութեան շնորհիւ՝ այն տե- սակ հանգամանքներ են, որոնք բաւական են քիչ շատ խորհող մըտ- քերէ ազգ կարգի բանաստեղծական պահանջկոտութիւնները վանելու: Յոյներու կամ Պուլկարներու գոր- ծունէութիւնը օրինակ բերելու ա- տեն անհեթեթ սխալ մըն է նկատի չառնել այս պարագան: Թիւրք կա- ռավարութիւնը, որ անոնց շար- ժումներուն սկզբնաւորութեան մի- ջոցին չէր կրնար վտանգաւոր վախ- ճանը յստակօրէն գուշակել, ընդհա- կառակը անոնց անկախութեան դառն օրինակէն փորձուած՝ սեղմեց մեր ներքին ազատութիւններուն

չըջանը, նիւթական խոտութիւննե- րը կրթական սահմանին մէջ ալ սարածեց ու սկսաւ խոչորացոյցով դիտել մեր ամէն մէկ քայլը: Վերջին Ռուս-թրքական պատերազմէն ետքը, Պալքաններէն քաշուած թիւրք պաշտօնեաները պաշտօնի զրկուեցան Հայաստան, ուր այն միջոցին քա- նի մը նոր կուսակալութիւններ ստեղծուեցան զանոնք տեղաւորելու համար: Ասոնք հայերու մէջջտես- նուած նոյնիսկ պարզ կրթական ջանքերը պատաստարական ձգտումնե- րու կը վերագրէին ու ամենաչնչին զէպք կը չափազանց կը մեծցնէին անուրիկելով թէ «Պուլկարիտատ աէ ին պէօլլէ պաշտօնը»: Եւ հետեւա- բար կառավարութիւնը նմանօրինակ վտանգի մը տուջը անտեսելու փութ- կատութեամբ՝ զսպողական այտաքոյ կարգի միջոցներու գիմեց: Ու ա- ուանց վարանելու կրնանք ըսել թէ աւելի ինքը եղաւ իր այս տեղոտ միջոցներով խնդրին պայթումը փութացնող, քան մեր երիտասարդ գործիչները իրենց եռանդով: Բացի Սասունի զկալէն, որ իսկուպէս վե- րոյնիշակներուն պէս պարագաներուն մէջ պատահած պայթում մըն էր, հայերու կողմէ եղած ցոյցերը քան ժամանակ տեղի ունեցան, երբ քա- ղաքականութիւնը մեր դատին նպաստաւոր երեւոյթ մը առաւ, բարենորոգումներու ծրագրերը կազ- մուեցաւ և ալ ոչ մէկուն (կարծենք Չօպանեան իր մասին ալ կը խոս- տովանի այս բանը) համար կատկա- ճելի էր յաջողութիւնը:

ԿԱՐԻԾ (Մնացածը յարողով)